

**Հաստատված է**  
Հայաստանի Հանրապետության պետական կառավարման  
ակադեմիայի գիտական խորհրդի 2017 թվականի  
նոյեմբերի 30 -ի նիստում (արձանագրություն N 10)

## **Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Ակադեմիայում գործող ուսանողական կազմակերպություն է, որի նպատակը սովորողների, ասպիրանտների և հետազոտողների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը նպաստելն է:

2. Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Ակադեմիայի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

3. Ընկերության կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից:

4. Ընկերությունն իր նպատակների և խնդիրների լուծման, երկարաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման համար և այլ դեպքերում համագործակցում է Ակադեմիայի գիտական և ուսումնական ստորաբաժանումների, ուսանողական խորհրդի ու այլ կազմակերպությունների հետ՝ ելնելով փոխօգնության, փոխշահավետության և հավասարության սկզբունքներից, համապատասխան պայմանագրերից ու համաձայնագրերից:

5. Ընկերությունն իր նպատակների իրագործման և գործառույթների իրականացման ժամանակ ակտիվորեն համագործակցում է հայաստանյան և արտասահմանյան գիտական

կենտրոնների ու բուհերի ուսանողական գիտական կառույցների հետ՝ այդ մասին տեղեկացնելով Ակադեմիայի գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին:

6. Ընկերության անդամները մասնակցում են թե՛ հանրապետությունում, թե՛ արտերկրում անցկացվող բազմաբնույթ մրցույթների, գիտաժողովների, դասընթացների ու սեմինարների:

7. Ընկերության կողմից իրականացվող աշխատանքներին և ծրագրերին կարող են մասնակցել ինչպես Ակադեմիայի, այնպես էլ այլ գիտակրթական հաստատությունների ուսանողները, ասպիրանտներն ու դասախոսները:

8. Ընկերությունը կարող է ունենալ խորհրդանշան, ձևաթուղթ, դրոշմակնիք և անհատականացման այլ միջոցներ:

9. Ընկերության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի ուսանողական գիտական ընկերություն,

2) հայերեն կրճատ՝ ՀՀ ՊԿԱ ՈՒԳԸ,

3) ռուսերեն լրիվ՝ Студенческое Научное Общество Академии государственного управления Республики Армения,

4) ռուսերեն կրճատ՝ СНО АГУРА,

5) անգլերեն լրիվ՝ Students Scientific Society of Public Administration Academy of the Republic of Armenia,

6) անգլերեն կրճատ՝ SSS PAARA:

10. Ընկերության գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կիևյան 8:

## II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ընկերության հիմնական նպատակն է աջակցել և նպաստել Ակադեմիայի ուսանողների, ասպիրանտների ու հետազոտողների կրթական, գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությանը, ինչպես նաև կազմակերպել ու համակարգել այդ գործունեությունը:

12. Ընկերության գործունեության ուղղություններն են՝

1) կրթական, գիտական և հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում, կազմակերպում և իրականացում,

2) ուսանողական գիտաժողովների, համաժողովների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ կրթական ու գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,

3) աջակցության ցուցաբերում շնորհաշատ ուսանողներին, ասպիրանտներին ու հետազոտողներին գիտական և հետազոտական լիարժեք գործունեություն ծավալելու նպատակով,

4) միջակադեմիական կրթական և գիտական կապերի հաստատում, համագործակցություն,

5) համալսարանական երիտասարդական գիտական ծրագրերի և ներուժի նպատակային ուղղվածության մասին տեղեկատվության համակարգում,

6) ուսանողների ներգրավում կրթական, գիտական խմբերում և ծրագրերում,

7) ուսանողների գիտական, հետազոտական աշխատանքների հրապարակում,

8) այլ կրթական, գիտական կենտրոնների, այլ բուհերի գիտական ընկերությունների հետ համագործակցություն,

9) սահմանված կարգով Ակադեմիայի կառավարման մարմիններում, հանձնաժողովներում գիտությամբ զբաղվող ուսանողների ներկայացում և շահերի պաշտպանություն:

13. Իր նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար Ընկերությունն իրավասու է՝

1) մշակել նախագծեր՝ արտաքին ֆինանսական աղբյուրներից դրամաշնորհներ ստանալու համար,

2) իր գործառույթներին համապատասխան՝ անվճար օգտագործել Ակադեմիայի գույքը, տեխնիկական միջոցները, ռեսուրսները՝ աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև տեղեկատվական հնարավորությունները՝ ուսանողական գիտական գործունեությունը համակողմանիորեն լուսաբանելու համար,

3) Ակադեմիայի կառավարման մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանը վերաբերող գիտական և հետազոտական բնույթի հարցեր:

### III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

14. Ընկերության ղեկավար մարմինը Ընկերության գիտական խորհուրդն է: Ընկերության նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Ընկերության գիտական խորհրդի նախագահ:

15. Ընկերության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարող են ստեղծվել կառուցվածքային ստորաբաժանումներ (հանձնաժողովներ): Ընկերության նախագահի կողմից կարող են նշանակվել պատասխանատուներ:

16. Ընկերության գիտական խորհրդի կազմի մեջ մտնում են Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, հանձնաժողովների պատասխանատուները և Ակադեմիայի ամբիոններից մեկական ներկայացուցիչ:

17. Ընկերության գիտական խորհուրդը գումարում է նիստեր ուսումնական կիսամյակում առնվազն երկու անգամ: Արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ակադեմիայի ռեկտորի, գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, Ընկերության նախագահի, Ընկերության գիտական խորհրդի անդամների երկու երրորդի պահանջով:

18. Ընկերության գիտական խորհրդի նիստը օրինական է, եթե դրան մասնակցում են Գիտական խորհրդի անդամների կեսից ավելին, իսկ որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Ընկերության գիտական խորհրդի նիստերին ի պաշտոնե մասնակցում է Ակադեմիայի գիտաուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

19. Ընկերության գիտական խորհուրդը՝

1) քննարկում և որոշում է Ընկերության կառուցվածքը և գործունեության կարևորագույն ուղղությունները,

2) առաջարկություններ է պատրաստում Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և ներկայացնում Ակադեմիայի գիտական խորհրդի հաստատմանը,

3) միջոցներ է ձեռնարկում իր ընդունած որոշումների իրականացման համար,

4) մշակում է Ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում և համակարգում է Ընկերության աշխատանքներն ու ծրագրերը,

5) քննարկում և ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունը,

6) հաստատում է Ընկերության գիտական խորհրդի աշխատակարգը,

7) ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված՝ Ընկերության աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում, նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերող որոշ հարցերի լուծման իրավունք,

8) որոշում է ընդունում Ընկերության պատվավոր անդամի կոչումներ շնորհելու մասին,

9) կանոնակարգում է Ընկերության անդամակցությանը վերաբերող հարցերը,

10) առաջարկություններ է ներկայացնում Ակադեմիայի գիտական խորհրդին,

11) հաստատում է Ընկերության այն անդամների կազմը, որոնք Ընկերության կողմից ներկայացվում են Ակադեմիայի գիտական խորհրդում:

20. Ընկերության նախագահը հաստատվում է Ակադեմիայի գիտական խորհրդի կողմից՝ ռեկտորի ներկայացմամբ, երկու տարի ժամկետով:

21. Ընկերության գիտական խորհուրդն ընտրում է Ընկերության նախագահի տեղակալ և քարտուղար:

22. Ընկերության նախագահը Ակադեմիայի գիտական խորհրդի անդամ է:

23. Ընկերության նախագահը՝

1) իրականացնում է Ընկերության ընթացիկ և ամենօրյա ղեկավարումը,

2) համակարգում է Ընկերության աշխատանքները,

3) համակարգում է Ընկերության գիտական խորհրդի գործունեությունը, ապահովում է Ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը,

4) ներկայացնում է Ընկերությունը Ակադեմիայի կառավարման մարմիններում, այլ կազմակերպություններում,

5) Ընկերության գիտական խորհրդի առջև հանդես է գալիս Ընկերության ծրագրերի կատարման ընթացքի մասին հաղորդմամբ, կիսամյակային հաշվետվություն է ներկայացնում Ընկերության գիտական խորհրդին,

6) տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս Ակադեմիայի գիտական խորհրդում:

24. Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում վերջինիս լիազորությամբ կատարում է նախագահի լիազորությունները:

25. Ընկերության նախագահի տեղակալը կատարում է նախագահի հանձնարարականները: Նախագահի բացակայության դեպքում նախագահի հանձնարարությամբ համակարգում է բոլոր աշխատանքները:

26. Քարտուղարը համակարգում է քարտուղարության աշխատանքը: Քարտուղարի բացակայության դեպքում քարտուղարության աշխատանքները համակարգում է նախագահի տեղակալը:

27. Ընկերության գիտական խորհրդի անդամները պարտավոր են կատարել գիտական խորհրդի բոլոր որոշումները:

28. Ընկերության գիտական խորհրդի անդամներն իրավունք չունեն իրականացնելու Ընկերության հետ առնչվող այնպիսի գործունեություն, որի համար չունեն սույն կանոնադրությամբ նախատեսված լիազորություններ:

29. Սույն կանոնակարգով չնախատեսված և դրանում չընդգրկված այլ հարցերը կանոնակարգվում են Ակադեմիայի կանոնադրությամբ և Ընկերության գիտական խորհրդի որոշումներով:

#### IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

30. Ընկերության միջոցներն օգտագործվում են բացառապես Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

31. Ընկերության գործունեությունը ֆինանսավորվում է Ակադեմիայի արտաբյուջետային միջոցների հաշվին: Ֆինանսավորման չափը սահմանում է Ակադեմիայի կառավարման խորհուրդը: Ընկերության միջոցները գոյանում են նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

32. Ընկերությունն անվճար կարող է օգտվել Ակադեմիայի գույքային, տարածքային և այլ միջոցներից:

#### V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է Ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ:

34. Ընկերության գործունեության դադարումից հետո նրա ամբողջ գույքը և այլ միջոցները պատկանում են Ակադեմիային: